600.0417.20.09.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2017 թվականի №417Ա
քաղ. Երևան

«ՎԻՊ ԱՎՏՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի նոյեմբերի 25-ին «ՎԻՊ ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է №9/1-118 թույլտվությունը, որի գործողության ժամկետը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի նոյեմբերի 3-ի №596Ա որոշմամբ երկարաձգվել է, և այն շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականությունների օգտագործման №0864 թույլտվություն),

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-002Հ, ապրիլի 4-ի №ԱԲ-792Հ և հուլիսի 6-ի №ԱԲ-1773Հ գրություններով,

դ) ընկերության կողմից օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2017 թվականի օգոստոսի 25-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2017 թվականի օգոստոսի 25-ի №ԱԲ-2244Հ գրությամբ,

ե) ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերությունը խախտել է օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2017 թվականի սեպտեմբերի 20-ի դրությամբ կազմում է 1 141 650 (մեկ միլիոն հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր հիսուն) դրամ, որից 406 875 (չորս հարյուր վեց հազար ութ հարյուր յոթանասունհինգ) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ 2011 թվականից մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը) առկա է ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 13-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, իսկ 641 350 (վեց հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամ գումարի մասով (հաշվարկված՝ մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը) առկա է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցումը պարտավորեցնելու մասին Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №346Ա որոշումը, որը գտնվում է հարկադիր կատարման փուլում,

է) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 13-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով բռնագանձման ենթակա 406 875 (չորս հարյուր վեց հազար ութ հարյուր յոթանասունհինգ) դրամ գումարից ընկերությունը վճարել է 145 000 (հարյուր քառասունհինգ հազար) դրամ գումարը,

է) 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման՝ ընկերության պարտավորությունը կազմում է 238 425 (երկու հարյուր երեսունութ հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ, որից 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 88 425 (ութսունութ հազար չորս հարյուր քսանհինգ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել №0864 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ը հաշվարկված 238 425 (երկու հարյուր երեսունութ հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ պարտքը, որից 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 88 425 (ութսունութ հազար չորս հարյուր քսանհինգ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
20 սեպտեմբերի 2017թ.